600.0069.07.03.18

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 մարտի 2018 թվականի №69Ա

քաղ. Երևան

### «ԱՐՑԱԽՏՐԱՆՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՏՈՒՅԺԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2011 թվականի մարտի 23-ի «ԱՐՑԱԽՏՐԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №118Ա որոշմամբ «ԱՐՑԱԽՏՐԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է ռադիոհաճախականության օգտագործման №0919 թույլտվությունը,

բ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17.1-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարը սահմանվում է տարվա համար և ենթակա է վճարման յուրաքանչյուր եռամսյակի համար հավասարաչափ՝ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը ներառյալ, իսկ 10-րդ մասի համաձայն՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների գումարների վճարումն օրենքով սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում գանձվում է տույժ՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար պակաս վճարված վճարի 0,075 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար,

գ) Ընկերությունը չի վճարել ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարները, ինչի մասին բազմիցս տեղեկացվել է, այդ թվում՝ Հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 6-ի №ԱԲ-1773Հ, հոկտեմբերի 3-ի №ԱԲ-2580Հ և 2018 թվականի հունվարի 10-ի №ԱԲ-029Հ գրություններով,

դ) Ընկերության կողմից Օրենքի 17.1-րդ հոդվածի պահանջների խախտման՝ ռադիոհաճախականության օգտագործման վճարների չվճարման փաստի ուսումնասիրության նպատակով 2018 թվականի փետրվարի 7-ին Հանձնաժողովը վերջինիս

նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի մասին ծանուցել է 2018 թվականի փետրվարի 7-ի №ԱԲ-2432 գրությամբ,

ե) Ընկերությունը հարուցված վարչական վարույթի շրջանակում ուսումնասիրվող հարցի կապակցությամբ որևէ փաստարկ կամ հիմնավորում չի ներկայացրել,

զ) Հանձնաժողովի աշխատակազմի կողմից իրականացված վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Օրենքի 17.1-րդ հոդվածի պահանջները և մինչ օրս չի կատարել ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների և ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժերի վճարման պարտավորությունը, որը 2018 թվականի մարտի 7-ի դրությամբ կազմում է 250 498 (երկու հարյուր հիսուն հազար չորս հարյուր իննսունութ) դրամ, որից 200 000 (երկու հարյուր հազար) դրամը ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 50 498 (հիսուն հազար չորս հարյուր իննսունութ) դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը, և

հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետը, 17.1-րդ հոդվածի 11-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել ռադիոհաճախականության օգտագործման №0919 թույլտվությամբ նախատեսված ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով մինչև 2018 թվականի մարտի 7-ը հաշվարկված 250 498 (երկու հարյուր հիսուն հազար չորս հարյուր իննսունութ) դրամ պարտքը, որից 200 000 (երկու հարյուր հազար) դրամը ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 50 498 (հիսուն հազար չորս հարյուր իննսունութ) դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը:
2. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է՝
   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսուն օրվա ընթացքում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
7 մարտի 2018թ.